ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4217-Ա « 15 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի Հ.361-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արման, Սուսաննա, Լիլիթ Սոսի Սարգսյանների և Գայանե Մկրտչյանի լ/ա Սոս Պետրոսյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2014 թվականի փետրվարի 10-ի հ.361-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու համար:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2014 թվականի փետրվարի 10-ի «Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10՝ քանդման ենթակա չորրորդ կարգի վթարային հանրակացարանային հ.104 բնակարանի բնակիչներ՝ Սոս Պետրոսյանին, Սուսաննա Սարգսյանին, Արման Սարգսյանին, Լիլիթ Սարգսյանին /ծնվ. 1990թ./, Գայանե Մկրտչյանին և Լիլիթ Սարգսյանին /ծնվ.2013թ./ վերաբնակեցնելու և բնակարան հատկացնելու մասին» հ.361-Ա որոշման 2-րդ կետում՝ «Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին (Ա.Ամյան)» բառերը փոխարինել «Լիազորել Երևանի քաղաքա-պետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին» բառերով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ